ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27-ը ապրիլի 2020թ.
ժամը 12^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ Ա. Ասատրյան (ԳԱՊ),

ՀՀ ՋՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության պետ, գնդապետ Ս. Մազմանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության ավագ սպա, մայոր Հ. Մանուկյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Կրակմարիչի և հրշեջի մարտական հանդերձանքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	<Պոժտեխնիկա> ՍՊԸ
2	<Ալեռտո> ՍՊԸ
3	<Պոժմաստեր> ՍՊԸ
4	<Տեքսուտրլդ> ՍՊԸ
5	<ՄԱԺԷՎ> ՍՊԸ
6	<Էլկոմպ> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 <Տեքսուտրլդ> ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկի տառերով և թվերով գրվածի մեջ առկա է անհամապատասխանություն: Տառերով հիմք ընդունելու դեպքում ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի հանրագումարը համընկնում է ընդհանուր գնի հետ, սակայն ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված, որի հիման վրա էլ գնահատող հանձնաժողովը մերժել է <Տեքսուտրլդ> ՍՊԸ -ի հայտը 1-ին չափաբաժնի մասով:

Քանի որ <Էլկոմպ> ՍՊԸ-ն և <ՄԱԺԷՎ> ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրել են համարժեք տեխնիկական բնութագրեր, պատասխանատու ստորաբաժանման կողմից 08.05.2020թ.. ներկայացվել է մասնագիտական եզրակացություն, որի համաձայն մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ <Էլկոմպ> ՍՊԸ-ի, <ՄԱԺԷՎ> ՍՊԸ-ի և <Տեքսուտրլդ> ՍՊԸ-ի, մասնավորապես՝

<Էլկոմպ> ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի 4-րդ կետում (Հրշեջի երեքմատնյա ձեռնոց) նշված է «Կտորը՝ հատուկ հրակայուն՝ <Պիրովիտեկս> կամ համարժեք»: Մասնակցի կողմից պետք է առաջարկվի <Պիրովիտեկս> տեսակի կտոր կամ կոնկրետ որևէ այլ կտոր, առանց կամ համարժեքի:

<ՄԱԺԷՎ> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հայտի ապահովում /Հավելված N 3/, որը պետք է ներկայացվեր կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվելու է բանկային երաշխիքի ձևով, ապա անհրաժեշտ է մինչև 12.05.2020թ. ժամը 17:00-ն հայտի ապահովման բնօրինակը ուղեկցող գրությամբ ներկայացնել գնահատող հանձնաժողովին:

Միաժամանակ հայտնում ենք, որ հրավերով սահմանված պայմանագրի նախագծի «Ծանոթության» բաժնում ներառված բոլոր կետերը, որոնք չեն հանդիսանում տեխնիկական բնութագրի մաս նույնությամբ ներառվելու են պայմանագրի մեջ:

<Տեքսուտրլդ> ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի 1-ին կետում (Հրշեջի մարտական հանդերձանք) նշված է «ГОСТ Р 53264-2009: Տեխնիկական պայմանները՝ ТУ 8572-001-43228185-2013 կամ համարժեք:»: Մասնակցի կողմից պետք է առաջարկվի կոնկրետ տեխնիկական պայման, առանց կամ համարժեքի:

2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի 4-րդ կետում (Հրշեջի երեքմատնյա ձեռնոց) նշված է «Կտորը՝ հատուկ հրակայուն՝ <Պիրովիտեկս> կամ համարժեք»: Մասնակցի կողմից պետք է առաջարկվի <Պիրովիտեկս> տեսակի կտոր կամ կոնկրետ որևէ այլ կտոր, առանց կամ համարժեքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 08.05.2020թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը և ծանուցել <Էլկոմպ> ՍՊԸ-ին, <ՄԱԺԷՎ> ՍՊԸ-ին և <Տեքսուտրլդ> ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: <Էլկոմպ> ՍՊԸ-ն և <Տեքսուտրլդ> ՍՊԸ-ն ներկայացրել են համարժեք տեխնիկական բնութագրեր, և քանի որ արդեն իսկ պատասխանատու ստորաբաժանման կողմից 08.05.2020թ.. ներկայացվել է մասնագիտական եզրակացություն,

ուստի <Էլկոմպ> ՍՊԸ-ի և <Տեքսուորլդ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկվախ տեխնիկական բնութագրերը համարժեք են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: <Էլկոմպ> ՍՊԸ-ն, <ՄԱԺԷՎ> ՍՊԸ-ն և <Տեքսուորլդ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Կրակմարիչներ /կրակմարիչներ՝ ԿՓ-25/	հատ	200	13 000 000	<Պոժտեխնիկա> ՍՊԸ	5 500 000	6 600 000	<Ալեռտո> ՍՊԸ	5 830 000	6 996 000
								<Պոժմաստեր> ՍՊԸ	5 876 000	5 876 000
								<Պոժտեխնիկա> ՍՊԸ	5 500 000	6 600 000
2	Հրշեջ խմբի համազգեստներ /հրշեջի մարտական հանդերձանք/	հատ	100	14 460 000	<ՄԱԺԷՎ> ՍՊԸ	5 747 500	6 897 000	<ՄԱԺԷՎ> ՍՊԸ	5 747 500	6 897 000
								<Էկոմպ> ՍՊԸ	9 975 000	11 970 000
								<Տեքսուորլդ> ՍՊԸ	10330 000	12 396 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են), բացառությամբ <Տեքսուորլդ> ՍՊԸ-ի:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 14.05.2020թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել <Պոժտեխնիկա> ՍՊԸ –ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել <ՄԱԺԷՎ> ՍՊԸ–ն:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Գրիգորյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Ս. Մազմանյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Հ. Մանուկյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան